

գաղտնիքներից մեկը: Իսկ այդ վրիպումները, ըստ բանախոսի, հետևյալներն են: Զոհրապի նովելներում «ավելի հաճախ narration-ներ, դիպագրություններ կան, քան երևույթներ», այնուհետև՝ «ավելի անհատներ են, որ կը շարժին, քան տիպեր»: Շ. Մխաբյանը նկատում է նաև որ «հրապարակագրի խորթ ջիդ մը կ'ապրի տակավին իր շատ մը նորավեպերուն մեջ»։ Խոսքը վերաբերում է հեղինակային ուղղակի միջամտություններին, որոնց մասին բանախոսը գրում է. «Բարոյախոսություն, քարոզություն, անվերջ խորհրդածություններ, որոնք կը խաթարեն շքեղ կերտվածք մը»: Զոհրապի այս և նման այլ «վրիպումների» մասին մեր գրականագիտության մեջ շատ է գրվել, հիմնավորապես ցույց է տրվել, որ դրանք միայն գրողի ոճի ու մտածողության առանձնահատկություններն են:

Հովհաննես Մեթյանին նվիրված ասուլիսը յուրօրինակ հորելյանական հանդիսություն է, բանաստեղծի՝ շուրջ չորս տասնամյա գրական գործունեության մեծարանք: Այնուամենայնիվ, բանախոսները՝ Տ. Չրաքյանը և Վ. Թեքեյանը, ընդհանուր գծերով ցույց են տալիս նրա ստեղծագործության պատմական ու գեղարվեստական նշանակությունը: Մեթյանն իր գեղագիտական հայացքներով ու արվեստի սկզբունքներով պատկանում է գարթոնքի շրջանի արևմտահայ ռոմանտիկների փայլուն սերնդին, որոնց նախահայրը Ալիշանն էր: Այդ սերնդի գործունեությունը աչքի է ընկնում լուսավորական համապարփակությամբ և հայրենասիրական խանդավառությամբ: Որքան էլ այդ սերունդը «ոգեպաշտ» էր, այսինքն՝ ամբողջովին ապրում էր հոգեղեն կյանքի խորհուրդներով, որքան էլ նրանց բանաստեղծությունը տոգորված էր սիրո, բնության, բարության ու լույսի ռոմանտիկ իդեալներով, այնուամենայնիվ, նրանց հայրենասիրությունը միանգամայն գործնական հայրենասիրություն էր: Մայրենի լեզվի նրանց նախանձախնդրության մասին Տ. Չրաքյանը, նկատի ունենալով նաև Հ. Մեթյանի բանաստեղծությունների լեզուն, գրում է. «... թե ոչ միշտ հայրենիքի բանաստեղծ մը, կամ հայրենիքի հայ մը, բայց հավետ հայերենի Հայ մըն է Հովհ. Մեթյան: Ո՛հ, իր ազգասիրության գեղեցկագույն ձևն է իր սերն առ ազգային լեզուն. իր ճշմարիտ, իր սքանչելի հայրենագիտությունն իր Հայու